ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2022թ. N 75-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 254-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 5-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի «Ջերմուկ համայնքում աճուրդների անցկացման կանոնակարգը հաստատելու, աճուրդային հանձնաժողով ստեղծելու և Ջերմուկ համայնքի ղեկավարի 2014 թվականի դեկտեմբերի 29-ի N 117-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 254-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման 2-րդ կետում՝

ա. «Սամվել Մարգարյան – համայնքի ղեկավարի տեղակալ» բառերը փոխարինել «Վարդան Սարգսյան– համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ» բառերով,

բ. «աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ–աուդիտոր» բառերը փոխարինել «համայնքի ղեկավարի խորհրդական» բառերով

գ. «առաջատար» բառը փոխարինել «գլխավոր» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 մարտի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2022թ. N 76-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Ջերմուկ համայնքում աճուրդների անցկացման կանոնակարգի 7-րդ կետով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի կողմից ներկայացված Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 4-րդ փողոցի N 4/4 հասցեի հողամասն օտարելու նպատակով հայտարարել աճուրդ. աճուրդի օր նշանակել սույն թվականի ապրիլի 29-ը:

2. Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 մարտի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2022թ. N 77-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉ ԷԼԵՆ ՎԱՉԻԿԻ ԱՎԱԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՄՈՎՍԵՍ ՎԱՉԻԿԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի մարտի 30-ի N 2 արձանագրության, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Մովսես Վաչիկի Ավագյանի դիմումը (մտից՝ 2022 թվականի մարտի 29-ի N 483) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաշվի առնելով Ջերմուկ համայնքի ղեկավարին կից գործող խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի եզրակացությունը՝ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի անչափահաս բնակիչ Էլեն Վաչիկի Ավագյանի (ծնված՝ 2005 թվականի դեկտեմբերի 9-ին) նկատմամբ սահմանված հոգաբարձությունը դադարեցնել և հոգաբարձու Մովսես Վաչիկի Ավագյանին ազատել հոգաբարձուի պարտականությունների կատարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մովսես Վաչիկի Ավագյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 մարտի 30
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2022թ. N 78-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱԼՅՈՇԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ալյոշա Վարդազարյանի հայտը (մտից՝ N 500, 2022 թվականի մարտի 31). **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ալյոշա Վարդազարյանին 2022 թվականի ընթացքում տալ Ջերմուկ համայնքի գ. Գնդեվազ 1 փող. 2-րդ նրբ 2/1 հասցեում գտնվող խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 25):

2. Ալյոշա Վարդազարյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 և 900365031351 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 3000-ական (երեք հազարական) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալյոշա Վարդազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է սույն որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարած լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 մարտի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2022թ. N 79-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ 4-ՐԴ ՓԱԿՈՒՂՈՒ N 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ Գ. Ե. ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝ հիմք ընդունելով ՀՀ «Վայոց ձորի մարզ» նոտարական տարածքի նոտար Մ. Մարգարյանի կողմից 24.03.2022 թ. տրված Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ 31.03.2022 թ. Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-31032022-10-0060 որոշումը և Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Գերասիմ Երվանդի Անդրեասյանի դիմումը (մտից N 518, 04.04.2022 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ճանաչել Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Ռազմիկ Գերասիմ Երվանդի Անդրեասյանի (ծնված՝ 20.05.1952 թ.) սեփականության իրավունքը Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 5-րդ փողոցի 4-րդ փակուղու N 2 հասցեում գտնվող բնակելի տան՝ հարակից օժանդակ շինություններով, և այն սպասարկող հողամասի նկատմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցված են ընտանիքին սեփականաշնորհված 0,08 հա մակերեսով 10-016-0024-0021 կադաստրային ծածկագրով հողամասի վրա (փաստացի չափագրումով՝ 0,07406 հա):

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները, ընդհանուր մակերեսը՝ 223,2 քմ, կառուցվել են 1958 թվականին, դրանք կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, շինության պահպանումը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից՝ հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի չափագրման փաստացի արդյունքներ՝ ըստ Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյանի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերի և շինությունների բնութագրի. ՀՀ Կադաստրի կոմիտեում անշարժ գույքի հաշվառման ծածկագիր՝ 202292TNTW:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գերասիմ Երվանդի Անդրեասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 ապրիլի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2022թ. N 80-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ **որոշում եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի՝ ստորև ներկայացվող որոշումների մեջ կատարել հետևյալ լրացումը՝ բոլոր որոշումների 1-ին կետում «կայանի» բառից հետո ավելացնել «և հարակից ենթակայանների» բառերը.

* 03.11.2021 թ. ««ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նախագծման թույլտվություն տալու մասին» N 427-Ա

* 03.11.2021 թ. ««ԴՈՒՍՏՐ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նախագծման թույլտվություն տալու մասին» N 428-Ա

* 03.11.2021 թ. ««ԱՐՄ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նախագծման թույլտվություն տալու մասին» N 429-Ա

* 04.11.2021 թ. ««ԱՅ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նախագծման թույլտվություն տալու մասին» N 430-Ա

* 24.11.2021 թ. ««ԴՈՒՍՏՐ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը շինարարության թույլտվություն տալու մասին» N 445-Ա

* 24.11.2021 թ. ««ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը շինարարության թույլտվություն տալու մասին» N 446-Ա

* 24.11.2021 թ. ««ԱՐՄ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը շինարարության թույլտվություն տալու մասին» N 447-Ա

* 24.11.2021 թ. ««ԱՅ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը շինարարության թույլտվություն տալու մասին» N 448-Ա

2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2022թ. N 81-Ա

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հաշվի առնելով «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության գործադիր տնօրեն Հ. Ալոյանի դիմումները (մտիցներ՝ 2022 թվականի մարտի 31-ի NN 497, 498 և 499)՝

ո ր ո շ ու մ եմ՝

1. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի ապրիլի 12-ին տրված NN 2,3 և 4 շինարարության թույլտվությունների գործողության ժամկետները երկարաձգել մեկ տարով:

2. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամ՝ տեղական տուրք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 ապրիլի 4
Ջերմուկ